

**ПОЛИТИКА**

**Ադրբեջանի էներգետիկ համակարգը և նրա ռենտային կախվածությունը**

*Մանվելյան Արմեն Բ.*

*պ.գ.թ., ավագ գիտաշխատող, Արևելագիտության ինստիտուտ, ԳԱԱ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0003-4940-3700>

[armenmanvelyan@gmail.com](mailto:armenmanvelyan@gmail.com)

ՀՏԳ՝ 32(479.24), 338; EDN: CCAJWP

DOI: 10.58587/18292437-2024.6-9

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** Ադրբեջան, ռենտային պետություն, նավթային տնտեսություն, գազի համակարգ, նավթային եկամուտ, նավթային հիմնադրամ, նվազում

**Энергетическая система Азербайджана и её рентная зависимость**

*Манвелян Армен Б.*

*к.и.н., старший научный сотрудник, Институт востоковедения НАН РА (Ереван, РА)*

**Аннотация.** Азербайджан превратился в классическое государство-рантье за счёт доходов от нефти и газа, находясь в зависимости от структур, финансирующих этот сектор, в первую очередь от британской British Petroleum Company. Нефтегазовые доходы этого государства зависят от объёмов добычи нефти и газа и их мировых цен. И если международные цены колеблются, то добыча нефти в этой стране снижается из года в год, и официально Баку не удалось прервать эту тенденцию. Нефтегазовые доходы Азербайджана сокращаются, и эта тенденция к снижению добычи нефти в Азербайджане устойчиво сохраняется на протяжении последних 10 лет, и в 2023 году она достигла своего исторического максимума, снизившись за год на 7 процентов. В 2025 году, скорее всего, цены на нефть начнут снижаться, что ещё больше сократит нефтяные доходы Азербайджана. Можно сделать вывод, что в течение следующих нескольких лет нефтегазовые доходы Азербайджана будут непрерывно снижаться как за счёт сокращения добычи нефти, так и за счёт снижения цен на нефть.

**Ключевые слова и словосочетания:** Азербайджан, государство-рантье, нефтяная экономика, газовая система, нефтяные доходы, нефтяной фонд, упадок

**The Energy System of Azerbaijan and its Rentier Dependence**

*Manvelyan Armen B.*

*PhD, Senior researcher, Institute of Oriental Studies, National Academy of Sciences (Yerevan, RA)*

**Abstract.** Azerbaijan has become a classic rentier state due to its oil and gas revenues, depending on the structures that finance this sector, primarily the British Petroleum Company. The oil and gas revenues of this state depend on the volumes of oil and gas production and their world prices. And if international prices fluctuate, then oil production in this country decreases from year to year, and official Baku has not managed to interrupt this trend. Azerbaijan's oil and gas revenues are declining, and this downward trend in oil production in Azerbaijan has been steadily maintained over the past 10 years, and in 2023 it reached its historical maximum, having decreased by 7 percent in a year. In 2025, oil prices are likely to begin to decline, which will further reduce Azerbaijan's oil revenues. It can be concluded that over the next few years, Azerbaijan's oil and gas revenues will continuously decline both due to a reduction in oil production and due to a decrease in oil prices.

**Keywords & phrases:** Azerbaijan, rentier state, oil economy, gas system, oil revenues, oil fund, decline

Ադրբեջանը մեկ տնտեսության պետություն է խորքային կախվածություն ունենալով էներգակիրների արդյունահանումից և արտահանումից, ու այս առումով հատկապես կարևոր է նավթի գործոնը, որը նրա ֆինանսավորման հիմնական աղբյուրն է: Իր նավթարդյունաբերության զարգացման համար Ադրբեջանը երկարատև համագործակցություն է ձևավորել Արևմտյան մի շարք նավթա-գազային ընկերությունների հետ, որոնցից հատկապես առանձնապես է Բրիտիշ Փետրոլիում ընկերությունը, որը նրա տնտեսության հիմնական ներդրողն է:

Հետխորհրդային շրջանում Ադրբեջանը մեծ տեղ է հատկացրել նավթի և ապա գազի արդյունահանմանը և արտահանմանը, քանի որ դա գոյություն ունեցող իշխանական համակարգի գոյատևման և ներդրումներ ներգրավելու միակ միջոցն է: Այս հանգամանքով էլ պայմանավորված այդ պետությունը ժամանակի ընթացքում խորքային կախվածության մեջ է հայտնվել իր նավթագազային համակարգում հիմնական ներդրողից՝ Բրիտիշ Փետրոլիում ընկերությունից:

Ադրբեջանի նավթագազային համակարգը նրա եկամուտների ու ընդհանրապես գոյության միակ երաշխքն է ու այս առումով այդ պետության համագործակցությունը ԲՓ-ի հետ երկար ժամանակ կարել էր հաջողված համարել, քանի որ 1994-ից, այսպես կոչված դարի պայմանագրի կնքումից հետո, մոտ 16 տարի անց՝ 2010 թ.-ին այդ համագործակցության արդյունքում նավթի արդյունահանումը հասավ իր բարձրագույն կետին՝ 50 միլիոն տոննա տարեկան: Ադրբեջանը հասավ իր երազած հնարավորությունների մաքսիմումին և թվում էր թե դրանից հետո զարգացումը միայն դեպի վեր է գնալու նավթային գործոնին ավելացնելով նաև գազի գործոնը:

Սակայն հետագա տարիներին նավթի արդյունահանումը այդ պետությունում սկսվեց կայուն կերպով անկում ապրել, իսկ վերջին 2 տարիների ընթացքում նավթի արդյունահանման անկման տեմպերը մեծ արագության են հասել, որոշակի խնդիրներ ստեղծելով այդ պետության համար: Նավթի արդյունահանման անկման տեմպերը շատերի կողմից էին կանխատեսվել, սակայն նույնիսկ նրանց վատագույն կանխատեսումներում նմանատիպ թվեր չկային: Այսպես, 2023 թ.-ին Ադրբեջանի նավթի արդյունահանումը նվազեց մինչև 30 միլիոն տոննա տարեկան, անկման ընդհանուր ծավալը, վերջին 10 տարիների կտրվածքով, հասավ 40%-ի [1]:

**Ինչ հետևանքներ այն կարող է ունենալ այդ պետության նավթագազային համակարգի վրա, ինչպես այն կարող է ընդհանրապես ազդել այդ երկրի տնտեսության ու մասնավորապես քաղաքական համակարգի վրա: Մրանք են գլխավոր հարցերը, որոնք պետք է հասկանալ այդ պետության քաղաքական հետագա վարքագիծը կանխորոշելու և նրա գործողությունները հասկանալու համար:**

### **Ռենտային պետության Ադրբեջանական առանձնահատկությունները**

Ադրբեջանը դասական ռենտային պետություն է պայմանավորված այդ տիպի պետության բոլոր ախտանիշներով: Մասնավորապես նա գոյատևում է իր նավթի ու գազի պաշարներով հարուստ ընդերքը վարձակալության հանձնելով միջազգային նավթագազային կոնսորցիումներին:

Առաջին նմանատիպ կոնսորցիումը 1994 թ.-ին ստեղծվեց այսպես կոչված Դարի պայմանագրի կնքման արդյունքում՝ Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերություն (ԱՄՕՐ), որի հիմնական փայտերը Բրիթիշ Փետրոլիում ընկերությունն էր: Այդ ընկերությանը մաս էին կազմում նաև ամերիկյան Էքսոն Մոբիլը և այլ խոշոր ընկերություններ: Ադրբեջանը այդ կոն-

սորցիումում ներկայացված էր պետական SOCAR ընկերության տեսքով և ուներ ընդհանուր փայաբաժնի 25 տոկոսը:

ԱՄՕՐ [2] հիմնվել է 1994 թվականին, սեպտեմբերի 20-ին՝ 30 տարի ժամկետով պայմանագիր կնքելով Ադրբեջանի կառավարության հետ (պայմանագիրը վավերացվել է խորհրդարանի կողմից 1994-ի դեկտեմբերի 2-ին, իսկ ընկերությունը սկսել է իր աշխատանքները 1995 թ.-ի փետրվարից): Ընկերության հիմնադիրներն էին միջազգային 11 ընկերություններ՝ առաջին հերթին, բրիտանական British Petroleum-ը (BP) \* և Ramco-ն, ամերիկյան Exxon, Unocal, Amoco, McDermott, Pennzoil, ապա ռուսական LUKoil-ը, նորվեգական Statoil-ը, թուրքական TPAO-ն և, վերջապես, Սաուդյան Արաբիան ներկայացնող Delta Nimir նավթային ընկերությունները: Իր մասնաբաժինը ունի նաև պետության շահերը ներկայացնող Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (SOCAR)՝ 11.6%:

Ընկերությունը իր հիմնադրման առաջին իսկ տարիներին սկսել է շահագործել հեռանկարային համարվող Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթահանքերը: Այնտեղի նավթի պաշարները գնահատվում էին մոտավորապես 4 մլրդ բարել, ինչը այդ պահին կազմում էր Ադրբեջանի ապացուցված նավթի պաշարների մոտ 60%:

ԱՄՕՐ բաժնետեր՝ վեց պետություններ ներկայացնող այս տասնմեկ ընկերությունների ցանկը մի քանի անգամ փոխվել է. դրանց մի մասը հեռացել է (օրինակ՝ ռուսական LUKoil-ը), իսկ ուրիշները (մասնավորապես նորվեգական Statoil-ը)՝ միացել: Սակայն, անփոփոխ է մնացել BP կողմից Ադրբեջանի թիվ մեկ նավթային ընկերության նկատմամբ վերահսկողությունը: BP-ն՝ որպես ամենախոշոր բաժնետեր (35.8%), հանդիսանում է ԱՄՕՐ-ի օպերատոր-կառավարիչը և ամբողջությամբ վերահսկում է նավթի ու գազի արդյունահանումը Ադրբեջանի ամենահեռանկարային համարվող նավթահանքերում [3]:

2023 թ.-ի դրությամբ Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթադաշտից ԱՄՕՐ-ը օրական արդյունահանում է միջինում մոտ 551 հազար բարել նավթ: Այստեղ կարևոր է նշել, որ 2014 թ. West Chirag կոչվող նավթաաշտարակի շահագործումից հետո Ադրբեջանը կարողացավ ժամանակավորապես կանխել նավթի արդյունահանման կտրուկ անկումը, որը սկսվել էր 2010 թ.-ից հետո [2], սակայն հետագայում այդ անկումը շարունակվեց, իսկ 2023 թ.-ին այն հասավ իր պատմական մաքսիմումին՝ 7% նվազում մեկ տարվա ընթացքում [1]:

Այսինքն Ադրբեջանի վերածումը դասական ռենտային պետության սկսվեց Դարի պայմանագրով, ինչի հիման վրա ստեղծված ԱՄՕՐ ամենախոշոր նավթային ընկերությունն էր, որի

հիմնական փայտերը և օպերատորը հանդիսանում էր Բրիթիշ Փետրոլիում ընկերությունը: Սրան հետագայում եկան լրացնելու նմանատիպ այլ ընկերություններ ևս, որտեղ նորից հիմնական գերիշխող դիրքը ունի Բրիտանական այդ ընկերությունը:

ԲՓ-ին վերահսկում էր ոչ միայն նավթի ու գազի արդյունահանումը այդ պետությունում այլև այդ էներգակիրների արտահանման տրանսպորտային հիմնական ուղիները ևս: 2000 թ.-ի սկզբին սկսվեց կառուցվել նաև Բաքու-Թբիլիսի-Չեյխան նավթամուղը և Բաքու-Էրզրում (Հարավային Կովկասյան միջանցք) գազամուղը: Այս ընկերություններում ևս հիմնական փայտեր և կառավարիչ-օպերատոր հանդիսանում էր Բրիթիշ Փետրոլիում ընկերությունը և միազգային մի շարք ընկերություններ նույնպես, Ադրբեջանը ինչպես միշտ ներկայացված էր պետական SOCAR ընկերության տեսքով:

Ինչ վերաբերում է Շահ-Դենիզ կոնսորցիումին՝ ադրբեջանական գազի արդյունահանման հիմնական ընկերությանը, այն ստեղծվել էր շահագործելու նույնանուն գազային հանքավայրը, որը հայտնաբերվել էր 1999 թ.-ին՝ Բաքու քաղաքից մոտ 70 կմ հեռավորության վրա: Այնտեղ գազի ապացուցված պաշարները գնահատվում էին, այդ պահին մոտ 1 տրիլիոն խորանարդ մետր, ներկայումս այդ պաշարները գնահատվում են մոտ 3 տրիլիոն/մ<sup>3</sup> և այնտեղ է կենտրոնացված պետության գազի պաշարների մոտ 80%-ը: Հարավկովկասյան գազամուղով (Բաքու-Թբիլիսի-Էրզրում) ադրբեջանական գազը մատակարարվում է Թուրքիային<sup>1</sup>:

Նորաստեղծ կոնսորցիումի ու Հարավկովկասյան գազամուղ ընկերության հիմնական բաժնետերերը և օպերատորը BP ընկերությունն էր՝ 25.5% մասնաբաժնով: Նմանաչափ մասնաբաժին այս ծրագրերում ուներ նաև նորվեգական Statoil-ը: Սակայն, 2013-2014թթ. վաճառելով իրենց բաժնետոմսերը՝ Statoil-ը և ֆրանսիական Total-ը հեռացան ծրագրից: 2013թ.-ին Statoil-ը վաճառեց իր բաժնետոմսերի 10%-ը BP-ին և SOCAR-ին, իսկ հաջորդ տարի նրա մնացած 15.5%-ը գնեց Petronas-ը՝ մոտ 2.25 մլրդ դոլար գնով:

Ֆրանսիական TOTAL-ը վաճառեց իր մասնաբաժինը՝ 10%-ը, թուրքական TPAO ընկերությանը՝ վերջնականապես հեռանալով ծրագրից: Դեռևս 2004թ.-ին ծրագրից առաջինը հեռացավ իտալական Eni-ն: Այստեղ կարևոր է շեշտել, որ Statoil-ի և TOTAL-ի ընկերությունների հեռացումը Շահ-Դենիզ նախագծից հուշում է, որ այն՝ ըստ նրանց կարծիքի, հեռանկարային չէ:

Այս պահին Շահ-Դենիզ կոնսորցիումի բաժնետոմսերը բաշխված են հետևյալ կերպ՝ 28.8%-ը պատկանում է BP-ին, 19%-ը՝ TPAO-ին, 16.7%-ը՝ SOCAR-ին, 15.5%-ը՝ Petronas-ին (Սալազիայի պետական նավթային ընկերությանը), 10%-ը՝ LUKoil-ին և մնացած 10%-ը՝ NIOC-ին [5]:

Ադրբեջանը իր ընդերքին շարունակական շահագործման հաշվին փորձում է հասնել տնտեսական առավելության միաժամանակ նաև ապահովելով ներդրումներ իր տնտեսության միակ հեռանկարային ուղղությունում՝ նավթագազային համակարգում: Ժամանակի ընթացքում այդ պետությունը սկսվեց վերածվել մեկ տնտեսության պետության էլ ավելի մեծացնել իր կախվածությունը էներգետիկ սեկտորից և հետևաբար այդ սեկտորը ֆինանսավորող և հիմնական ներդրումներ իրականացնող անդրազգային նավթագազային ընկերություններից:

Անդրազգային ընկերությունները գերիշխանություն ստանալով Ադրբեջանի նավթագազային սեկտորի նկատմամբ հետագայում սկսեցին որոշակի ազդեցություն ձեռք բերել նաև այդ պետության քաղաքական համակարգի նկատմամբ: Ընդհանարապես ռենտային պետության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ անդրազգային ընկերությունները երկարատև վարձակալության վերցնելով տվյալ պետության ընդերքը և ներդրումներ կատարելով դրա հաշվին քաղաքական ազդեցություն են ձեռք բերում նաև իշխող համակարգի նկատմամբ:

Շատ հաճախ անդրազգային ընկերությունների գործունեությունը այս կամ այն պետությունում պայմանավորված է ոչ միայն տնտեսական այլև քաղաքական շահերով: Այսինքն այդ ընկերությունները ոչ պաշտոնապես ներկայացնում են այս կամ այն տերությունը և նրա ռազմավարական հետաքրքրությունները տվյալ պետությունում և տարածաշրջանում:

### **Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային հիմնադրամ**

Ադրբեջանի տնտեսական ու քաղաքական համակարգի ֆինանսական հենասյուններից է Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային հիմնադրամը (ԱԳՆՀ): Այն հիմնադրվել է դեռ 1999 թ.-ի դեկտեմբերի 29-ին՝ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հրամանով: Նախատեսվում էր, որ Հիմնադրամի գործունեությունը ուղղված է լինելու պետության տնտեսության զարգացմանը և կայունության ապահովմանը, նավթի ու գազի վաճառքից ստացված եկամուտները հեռանկարային համարվող ծրագրերի ֆինանսավորման միջոցով:

Սկզբում Հիմնադրամի հաշվին կար ընդամենը 271 միլիոն դոլար, իսկ 2016 թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ նրա միջոցները կազմում են արդեն

<sup>1</sup> Ավելի մանրամասն տե՛ս՝ [4]:

մոտ 34.25 միլիարդ դոլար [6], 2024 թ. դրությամբ 61 մլրդ. Դոլար [7]: Հիմնադրամի կանոնադրության համաձայն՝ դրա ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել միայն ռազմավարական նշանակության ծրագրերի ու նախագծերի ֆինանսավորման նպատակով: Հիմնադրամը՝ տնտեսական ու ֆինանսական ճգնաժամերի պայմաններում հնարավոր կորուստները նվազեցնելու համար իր հիմնական ակտիվները ներդնում է արտասահմանյան տարբեր հիմնադրամներում, արժեթղթերում, անշարժ գույքում և այլն:

Հիմնադրամի միջոցների, ըստ 2015 թ.-ի տվյալների, 4.6% ներդրված է անշարժ գույքի մեջ (Մոսկվա, Լոնդոն, Փարիզ և Նյու Յորք), 3.1%՝ ոսկու (30175 կգ), 7.7%՝ տարբեր արժեթղթերի, 2.5%-ի հաշվին իրականացվում են տարբեր ծրագրեր, իսկ 80.6% ներդրված են տարբեր պարտաթղթերի և ֆինանսական շուկայի գործիքների մեջ [8]: Համեմատության համար նշենք, որ ոսկու մասնաբաժինը այդ հիմնադրամում 2024-ին հասել է 17%-ի, իսկ հիմնադրամի ակտիվների 33%-ը գտնվում է Հյուսիսային Ամերիկայում, իսկ 30,1%-ը Եվրոպայում և միջազգային տարբեր այլ կառույցներում [7]:

Հիմնադրամի եկամուտները կախված են նավթից ու գազի վաճառքից ստացվող եկամուտներից, իսկ, քանի որ դրանք՝ գները տատանվում են, ապա փոփոխվում են նաև հիմնադրամի միջոցները: Այսպես, 2015 թ. հիմնադրամի եկամուտը կազմել է 7.3 միլիարդ դոլար, մոտ 8.8 մլրդ դոլարով ավելի պակաս քան 2014 թ. (այսինքն հիմնադրամի ընդհանուր եկամուտը 2014-ին կազմել է 16.1 մլրդ դոլար): Համեմատության համար նշենք, որ 2024 թ.-ին հիմնադրամի ամսական եկամուտները կազմել է 616 միլիոն դոլար, այն դեպքում, որ 2014 թ.-ին այդ թիվը եղել է 1,3 մլրդ. դոլար, այսինքն հիմնադրամի նավթագազային եկամտաբերություն 10 տարվա ընթացքում նվազել է 2 անգամ:

Հիմնադրամը՝ 2015 թ. իր միջոցներից պետական բյուջե է փոխանցել 8.7 մլրդ դոլար գումարը, ինչը նշանակում է ընդհանուր դիֆիցիտը կազմել է մոտ 1.4 մլրդ. դոլար գումար [9], նկատենք, որ այդ թվականին նավթի միջին գները կազմել են 40 դոլար մեկ բարելի համար: 2024 թ.-ին նավթի 75 դոլար գնի պայմաններում հիմնադրամը Ադրբեջանի բյուջե է փոխանցել 5,6 մլրդ դոլար գումար 9 ամսվա կտրվածքով [7], այսինքն տարեկան հաշվարկով այն կազմել է Ադրբեջանի բյուջեի մոտ 40%-ը:

Ընդհանրապես պետք է շեշտել, որ արդեն երկար տարիներ է ինչ Ադրբեջանի պետական բյուջեն խորքային կախվածություն ունի Հիմնադրամի գործունեությունից և նրա ֆինանսական միջոցներից, և ամեն տարի ավելանում է Հիմնադրամից բյուջե ուղղված ֆինանսական

միջոցների փոխանցումները, որոնց հաշվին էլ, փաստորեն, գոյատևում է պետական մեքենան, ինչը հանգեցրել է պետության խորքային կախվածությանը նավթային եկամուտներից և ԱՊՆՀ-ից:

### **Եզրակացություն**

Այսպիսով, կարելի է պնդել, որ Ադրբեջանը դարձել է դասական ռենտիեր պետություն՝ նավթից և գազից ստացվող եկամուտների շնորհիվ՝ կախված լինելով այս ոլորտը ֆինանսավորող կառույցներից, առաջին հերթին՝ British Petroleum Company-ից: Այս պետության նավթի և գազի եկամուտները կախված են նավթի և գազի արդյունահանման ծավալից և դրանց համաշխարհային գներից: Իսկ եթե միջազգային գները տատանվում են, ապա այս երկրում նավթի արդյունահանումը տարեցտարի նվազում է, իսկ պաշտոնական Բաքուն չի կարողացել ընդհատել այդ միտումը:

Այսինքն՝ Ադրբեջանի նավթից ու գազից եկամուտները նվազում են, և այս միտումը կշարունակվի առաջիկա մի քանի տարիներին: Ադրբեջանում նավթի արդյունահանման նվազման միտումը անշեղորեն պահպանվել է վերջին 10 տարիների ընթացքում, իսկ 2023 թվականին այն հասել է իր պատմական առավելագույնին՝ մեկ տարվա ընթացքում նվազելով 7 տոկոսով: Իրավիճակը որոշակիորեն մեղմում է գազի արդյունահանման աճը, որը շարունակվում է, սակայն այս պետության միակ կայուն եկամուտը նավթն է:

2025 թվականին, ամենայն հավանականությամբ, նավթի գները կսկսեն նվազել, ինչն էլ ավելի կնվազեցնի Ադրբեջանի նավթային եկամուտները: Կարելի է եզրակացնել, որ առաջիկա մի քանի տարիների ընթացքում Ադրբեջանի նավթի և գազի եկամուտները շարունակաբար կնվազեն ինչպես նավթի արդյունահանման, այնպես էլ նավթի գների նվազման պատճառով:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Statistical Review of World Energy, <https://www.energyinst.org/statistical-review>
2. Woodward, “AIOC Contract,” Azerbaijan International, [http://www.azer.com/aiweb/categories/magazine/62\\_folder/62\\_articles/62\\_socar\\_aioc.html](http://www.azer.com/aiweb/categories/magazine/62_folder/62_articles/62_socar_aioc.html)
3. “Azeri-Chirag-Deepwater Guneshli” Bp.com, [http://bp.com/en\\_az/caspian/operationsprojects/ACG.html](http://bp.com/en_az/caspian/operationsprojects/ACG.html)
4. “Shah Deniz | Operations and Projects | BP Caspian,” Bp.com, [http://www.bp.com/en\\_az/caspian/operationsprojects/Shahdeniz.html](http://www.bp.com/en_az/caspian/operationsprojects/Shahdeniz.html)

5. Gwladys Fouche and Solsvik, “Statoil Exits Shah Deniz Gas Project with Stake Sale to Petronas” // Reuters, October 13, 2014, <http://www.reuters.com/article/us-statoil-petronas-shahdenizidUSKCN0I209020141013>
6. **Цурков М.** “SOFAZ избрал аудитора на ближайшие три года” // Trend.Az, July 12, 2016, <http://www.trend.az/business/economy/2556354.html>
7. SOFAZ поделился данными об активах и бюджете, <https://turanaz.ru/ekonomika/sofaz-podelilsia-dannymi-ob-aktivax-i-biudzete-785913>
8. **Jon Western and Joshua S. Goldstein**, “Humanitarian Intervention Comes of Age” // Foreign Affairs 90, no. 6 (2011): 48–59
9. “SOFAZ Reserves in 2015 Reduced by \$ 3.6 Billion,” March 2, 2016, [http://www.contact.az/docs/2016/Economics&Finance/030100148510en.htm#.V97vj\\_197IU](http://www.contact.az/docs/2016/Economics&Finance/030100148510en.htm#.V97vj_197IU)

*Сдана/Հանձնվել է՝ 25.11.2024*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 29.11.2024*

*Принята/Ընդունվել է՝ 06.12.2024*